ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/01

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Դ. Ղազարյանի (լիազորագիր, տրված՝ 22.04.2019թ.)

քննելով ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի կողմից 16.04.2019թ. ներկայացված և 17.04.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/01 բողոք) և կից փաստաթղթերը՝ պարզեցի հետևյալը.

1. «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Նիգ-Ապարան» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 16.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-13» ծածկագրով գնանշման հարցում, որին հայտ է ներկայացրել «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է 20 401 500 ՀՀ դրամ գնային առաջարկ և նույն չափաբաժնով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ն հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

Գնահատող հանձնաժողովի կողմից 12.04.2019թ. նիստի թիվ 10 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմքով:

Ընկերությունը հայտնել է, որ «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ taxservice.am կայքից ստացած «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, որի համաձայն՝ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը ունեցել է 17975 դրամ եկամտային հարկի գծով, 9523 դրամ շրջանառության հարկի գծով, և 108 դրամ բնապահապանական հարկի գծով վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ն 11.03.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրը) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 171 608 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընկերությունը հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության ժամկետանց պարտավորությունների հանրագումարը կազմել է 171 608 ՀՀ դրամ, որից 27 606 դրամ, ինչը պակաս է ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսից՝ 204 015 դրամ, և չի գերազանցում հիսուն հազար դրամը՝ ժամկետանց հարկային պարտավորությունների Օրենքով նախատեսված թույլատրելի շեմը, իսկ պարտավորության մնացած գումարը՝ 144 002 դրամը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

ՀՀ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի հանաձայն սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես ներառված չէ:

ՀՀ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես ներառված չէ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքների քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի հայտ ներկայացնելու օրվա դրությամբ 171 608 դրամ ժամկետանց պարտավորությունների հանրագումարից 27 606 դրամը /ունեցել է 17975 դրամ եկամտային հարկի գծով, 9523 դրամ շրջանառության հարկի գծով, և 108 դրամ բնապահապանական հարկի գծով/, ինչը պակաս է հիսուն հազար դրամից, իսկ մնացած գումարը՝ 144 002 դրամը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարման գծով, որի վերաբերյալ որևէ տեղեկատվություն առկա չի եղել հայտը ներկայացնելու օրվա դրությամբ taxservice.am կայքից ստացված «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում, ուստի Ընկերությունը գտնում է, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող հիմք հանդիսանալ «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի հայտի մերժման համար, և հայտը պետք է գնահատվի բավարար:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 12.04.2019թ. նիստի թիվ 10 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

«Նիգ-Ապարան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 25.04.2019թ. թիվ ԱՎ/01/08.6/197-19 գրությամբ հայտնել է, որ «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-13» ծածկագրով հայտարարված ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 11.03.2019թ., որի ընթացքում «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար և հիմք ընդունելով Ընկերության ներկայացրած գնային առաջարկը, Ընկերությունը հայտարարվել է առաջին տեզ զբաղեցրած մասնակից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով ս.թ. մարտի 20-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտե ուղարկված հարցմանն ի պատասխան՝ 25.03.2019թ. ստացված եզրակացության համաձայն, Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է 171 608 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

Նշված Կարգի 47-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

27.03.2019թ. Ընկերությունը ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանք, համաձայն որի նշված Ընկերությունը 11.03.2019թ. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ ունի 171 608 ՀՀ դրամ, որից՝ 144 000 ՀՀ դրամը՝ դրոշմանիշային վճարների գումարն է, իսկ 27 608 ՀՀ դրամը՝ տույժն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ինչպես նաև Կարգի 44-րդ և 45-րդ կետերը, գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի հայտը և համապատասխան հիմքերով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացրել գրություն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Պատվիրատուի կարիքների տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 11.03.2019թ. հայտ է ներկայացրել «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2019թ. ժամը 12:00- 14.03.2019թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 25.03.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Նիգ-Ապարան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 171 608 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 10 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը, մերժել է «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի հայտը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի կողմից 16.04.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 25.04.2019թ. թիվ ԱՎ/01/08.6/197-19 գրությունը և Ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: ***<u>Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:</u>*** Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2019-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով **<u>11.03.2019թ</u>**. հայտ է ներկայացրել «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2019թ. ժամը 12:00- 14.03.2019թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ Ընկերությունը Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 10 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է, քանի որ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Կարգի 44-րդ կետի հիման վրա 25.03.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Նիգ-Ապարան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է 171 608 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված շեմը*** (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է հիսուն հազար ՀՀ դրամի շեմը), ***մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:***

Այսպիսով՝ Կարգի 44-րդ կետը սահմանում է, որ եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած ***հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:*** Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է իրականությանը չհամապատասխանող, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նման դեպքերում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ և առաջնորդվել Կարգի 44-րդ կետի պահանջներով:

Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքով ներկայացրել է 11.03.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության՝ որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված

չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը ունի 17 975 ՀՀ դրամ եկամտային հարկի գծով, 9 523 ՀՀ դրամ շրջանառության հարկի գծով, 108 ՀՀ դրամ բնապահապանական հարկի և բնօգտագործման վճարի գծով վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ:

Միաժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված 26.03.2019թ. թիվ 207 տեղեկանքը, առ այն, որ 11.03.2019թ. դրությամբ Ընկերությունը ունի 17 975 ՀՀ դրամ եկամտային հարկի գծով, 9 523 ՀՀ դրամ շրջանառության հարկի գծով, 108 ՀՀ դրամ բնապահապանական հարկի և բնօգտագործման վճարի գծով, 144 000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի մասով պարտավորություն:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ արձանագրված պարտավորությունից 144 002 ՀՀ դրամը հանդիսացել է դրոշմանիշային վճար, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ տեսանելի չի եղել Ընկերության անձնական քարտի քաղվածքում և Ընկերությունը տեղեկացված չի եղել նշված պարտավորության վերաբերյալ, ապա հայտնում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Համաձայն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն դրոշմանիշային վճարը ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հանդիսանում է հարկային եկամուտ և հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի կողմից 16.04.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**